



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ ԵՎ ԱՅԼՈՔ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգաղ թիվ 59001/08)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

17 նոյեմբերի 2016թ.

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Կարապետյանը եւ այլոք ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք),
հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Միրյանա Լազարովա Տրայկովսկա [Mirjana Lazarova Trajkovska]՝ *Նախագահ,*

Քրիստինա Պարդալոս [Kristina Pardalos],

Լինոս-Ալեքսանդր Սիցիլիանոս [Linos-Alexandre Sicilianos],

Պոլ Մահոնի [Paul Mahoney],

Ալեշ Պեյխալ [Aleš Pejchal],

Ռոբերտ Սպանո [Robert Spano],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan]՝ *դատավորներ,*

եւ Աբել Կամպոս [Abel Campos]՝ *Բաժանմունքի քարտուղար,*

2016 թվականի օգոստոսի 30-ին եւ հոկտեմբերի 11-ին անցկացնելով
դռնփակ խորհրդակցություն՝

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նշված վերջին օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար
ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա)
34-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության չորս քաղաքացիներ
պրն Վլադիմիր Կարապետյանի, տկն Մարթա Այվազյանի, պրն Առաքել
Սեմիրջյանի եւ տկն Կարինե Աֆրիկյանի (դիմումատուներ) կողմից ընդդեմ
Հայաստանի Հանրապետության՝ 2008 թվականի նոյեմբերի 29-ին Դատարան
ներկայացված գանգատի (թիվ 59001/08) հիման վրա:

2. Դիմումատուներին ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան հանդիսացող պրն Վահե Գրիգորյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. Դիմումատուները, մասնավորապես, պնդել են, որ լրատվամիջոցներում իրենց կողմից կատարված հայտարարություններից հետո իրենց աշխատանքից ազատելը հանգեցրել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված՝ ազատ արտահայտվելու իրենց իրավունքի խախտմանը:

4. 2011 թվականի նոյեմբերի 17-ին դիմումատուների գանգատը, Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկվել է Կառավարություն:

ՓԱՍՏԵՐԸ

1. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուներ պրն Վլադիմիր Կարապետյանը (առաջին դիմումատու), տկն Մարթա Այվազյանը (երկրորդ դիմումատու), պրն Առաքել Սեմիրջյանը (երրորդ դիմումատու) եւ տկն Կարինե Աֆրիկյանը (չորրորդ դիմումատու) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են՝ ծնված, համապատասխանաբար, 1969, 1967, 1973 եւ 1954 թվականներին եւ ապրում են Երեւանում:

6. Տվյալ ժամանակահատվածում դիմումատուները տարբեր պաշտոններ են զբաղեցրել Արտաքին գործերի նախարարությունում, մասնավորապես՝ Մամուլի եւ տեղեկատվության վարչության պետի, Սպառազինությունների վերահսկման եւ միջազգային անվտանգության վարչության ՆԱՏՕ-ի բաժնի վարիչի, Եվրոպայի

վարչության խորհրդականի եւ Ամերիկայի վարչության ԱՄՆ-ի եւ Կանադայի բաժնի պետի պաշտոնները՝ համապատասխանաբար:

7. 2008 թվականի փետրվարի 19-ին Հայաստանում տեղի են ունեցել նախագահական ընտրություններ: Հիմնական թեկնածուներն էին այդ ժամանակ վարչապետի պաշտոն զբաղեցնող Սերժ Սարգսյանն ու ընդդիմադիր թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանը: Ընտրություններից անմիջապես հետո Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտարարել է, որ ընտրությունները կեղծվել են: 2008 թվականի փետրվարի 20-ից սկսած Լեւոն Տեր-Պետրոսյանի հազարավոր կողմնակիցներ կազմակերպել են համազգային բողոքի ակցիաներ, ինչպես օրինակ՝ ցույցեր եւ նստացույցեր:

8. 2008 թվականի փետրվարի 23-ին արտերկրում ՀՀ մի քանի դեսպաններ տարածել են հետեւյալ հայտարարությունը.

«Մենք՝ ներքոստորագրյալներս, հավատարիմ մնալով հայ դիվանագետի կոչմանը, առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության եւ հայ ժողովրդի առջեւ մեր ունեցած պատասխանատվության զգացումով, մտահոգված լինելով Հայաստանում ստեղծված իրավիճակով, խորապես հարգելով ՀՀ քաղաքացիների ընտրության իրավունքը, համոզված լինելով, որ միայն արդար եւ ազատ ընտրությունների արդյունքում ընտրված նախագահը կարող է լավագույնս դիմագրավել միջազգային ասպարեզում մեր պետության առջեւ առկա մարտահրավերներին եւ էականորեն բարձրացնել Հայաստանի միջազգային վարկը, մեր աջակցություն ենք հայտնում իր ազատության, արդար ընտրության իրավունքի պաշտպանության եւ Հայաստանում իրական ժողովրդավարության հաստատման համար պայքարի ելած մեր հայրենակիցներին:

Կարելի է երկրում կայունության պահպանման եւ հասարակական համաձայնության անհրաժեշտությունը, մեր հայրենակիցներին, եւ հատկապես երկրում հասարակական կարգի ու անդորրի ապահովման համար պատասխանատու բոլոր կառույցների ներկայացուցիչներին կոչ ենք անում զերծ մնալ ուժի միջոցով խնդիրներ լուծելու գայթակղությունից:

Հայաստանյան հեռուստաընկերություններին, եւ հատկապես Հ1-ին կոչ ենք անում ապահովել իրադարձությունների անկողմնակալ եւ համակողմանի լուսաբանում եւ ուղիղ

եթերի տրամադրում ներկա ներքաղաքական ճգնաժամի հաղթահարման վերաբերյալ կառուցողական դիրքորոշում ունեցող բոլոր ուժերի ներկայացուցիչներին:

Կոչ ենք անում ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում աշխատող մեր բոլոր գործընկերներին, միանալ մեր հայտարարությանը:»:

9. Այս հայտարարությունը նույն օրը լուսաբանվել է զանգվածային լրատվամիջոցներով: Ըստ առաջին դիմումատուի, ինքն այդ հայտարարությունն ստացել է նաեւ իր էլեկտրոնային փոստով: Ըստ Կառավարության, այս հայտարարությունը տարածած դեսպաններն ազատվել են իրենց զբաղեցրած պաշտոնից հենց հաջորդ օրը, եւ նրանց ազատելու փաստը լայնորեն լուսաբանվել է լրատվամիջոցներով:

10. 2008 թվականի փետրվարի 24-ին դիմումատուները տարածել են հետեւյալ հայտարարությունը՝

«Միանալով մեր գործընկերների հայտարարությանը եւ մտահոգություն հայտնելով հանրապետությունում ձեւավորված ներքին եւ արտաքին անցանկալի մարտահրավերներով հղի իրավիճակի կապակցությամբ, մեր վրդովմունքն ենք հայտնում ընտրական գործընթացի խախտումների առնչությամբ, որոնք ստվեր են նետում Հայաստանի Հանրապետությունում քաղաքակիրթ, արդար եւ ազատ նախագահական ընտրություն անցկացնելու մեր երկրի եւ հասարակության կամքի վրա:

Որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ՝ պահանջում ենք անհապաղ քայլեր ձեռնարկել միջազգային դիտորդական առաքելության, ինչպես նաեւ միջազգային այլ հեղինակավոր կազմակերպությունների զեկույցներում տեղ գտած առաջարկություններն իրականացնելու ուղղությամբ:

Միայն օրենքի տառին եւ ոգուն համապատասխան գործելու միջոցով մենք կկարողանանք ապահովել ժողովրդավարությունը եւ հանդուրժողականությունը ինչպես երկրի ներսում, այնպես էլ Հայաստանի բարի համբավը արտերկրում:»:

11. Դիմումատուների անուններն իրենց պաշտոնների անվանումների հետ միասին հրապարակվել են հայտարարության ներքեւի մասում: Ըստ երեւույթին, այս հայտարարությունը նույն օրը լուսաբանվել է մի քանի լրատվամիջոցներով, այդ թվում՝ Ազատություն ռադիոկայանով:

12. 2008 թվականի փետրվարի 25-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարն առաջին, երկրորդ եւ երրորդ դիմումատուներին աշխատանքից ազատելու վերաբերյալ հրամաններ է ընդունել: Չորրորդ դիմումատուն աշխատանքից ազատվել է նույնանման հրամանով՝ 2008 թվականի մարտի 3-ին: Որպես աշխատանքից ազատման հիմք՝ հրամաններում հղում է կատարվել «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի «ժ» ենթակետին եւ 44-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետին, որն ունի այնպիսի շարադրանք, ըստ որի, *inter alia* (ի թիվս այլնի), դիվանագետն իրավունք չունի իր ծառայողական դիրքը կամ աշխատանքային միջոցներն օգտագործել կուսակցությունների կամ հասարակական կազմակերպությունների շահերի համար կամ այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնելու համար (տե՛ս ներքեւում՝ 22-24-րդ պարբերությունները):

13. 2008 թվականի մարտին՝ չպարզված օրը, դիմումատուները հայց են ներկայացրել վարչական դատարան՝ վիճարկելով իրենց աշխատանքից ազատելու հարցը եւ փորձելով վերականգնել իրենց աշխատանքը: Մասնավորապես, նրանք պնդել են, որ իրենց աշխատանքից ազատելու մասին հրամաններում բացակայել են «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի հոդվածներով արգելվող՝ իրենց ծառայողական դիրքը կամ աշխատանքային միջոցները կուսակցությունների կամ հասարակական կազմակերպությունների շահերի համար օգտագործելու կամ այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնելու հետ կապված մասնավոր դեպքերի վերաբերյալ հիմնավորումներ: Նրանք նաեւ պնդել են, որ համոզմունքների եւ կարծիքների հիմքով աշխատանքից ազատելն արգելված է օրենքով:

14. Արտաքին գործերի նախարարությունը, որպես պատասխանող, 2008 թվականի ապրիլի 10-ին պատասխան է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ պնդելով, որ դիմումատուներն իրենց՝ 2008 թվականի փետրվարի 24-ի հայտարարությունը տարածելով, որը լուսաբանվել էր զանգվածային լրատվամիջոցներով եւ հայտարարվել էր ցույցերի ժամանակ, քաղաքական

գործունեություն են իրականացրել: Բացի այդ, դիմումատուներն օգտագործել են իրենց ծառայողական դիրքը, քանի որ հայտարարության մեջ նշել են իրենց պաշտոնների անվանումները:

15. 2008 թվականի մայիսի 29-ին Վարչական դատարանը մերժել է դիմումատուների հայցը՝ գտնելով, որ իրենց աշխատանքից ազատելը եղել է օրինական, քանի որ դիմումատուները, վիճարկվող հայտարարությունը տարածելով, ըստ էության, քաղաքական գործունեություն են իրականացրել: Այս առնչությամբ Վարչական դատարանը նշել է, որ վիճարկվող հայտարարությունը քաղաքական գործընթացներ է շոշափել, քանի որ այն ընտրությունների եւ հետընտրական իրադարձությունների վերաբերյալ քաղաքական գնահատական է պարունակել: Բացի այդ, այդ հայտարարությունը, ինչպես եւ դեսպանների հայտարարությունը, բարձրաձայն ընթերցվել է քաղաքական ուժի կողմից կազմակերպված ցույցի ժամանակ եւ ստացել քաղաքական գնահատական: Վարչական դատարանը նաեւ գտել է, որ իրենց պաշտոնների անվանումները նշելով՝ դիմումատուներն օգտագործել են իրենց ծառայողական դիրքը: Դիմումատուների ազատ արտահայտվելու իրավունքը, որը պաշտպանվում է Սահմանադրության (<< Սահմանադրություն) 27-րդ հոդվածով, չի խախտվել, քանի որ դիմումատուներն իրենց այդ իրավունքն իրացնելիս օգտագործել են իրենց ծառայողական դիրքն ու աշխատանքային միջոցները: Հետեւաբար, այդ իրավունքի մասով առկա սահմանափակումները համապատասխանում են Սահմանադրության 43-րդ հոդվածին: Բացի այդ, դիմումատուներն աշխատանքից ազատվել են ոչ իրենց քաղաքական կարծիքի հիմքով, այլ այն պատճառով, որ այդ կարծիքը տարածելով, նրանք օգտագործել են իրենց ծառայողական դիրքը, ինչն արգելվում է օրենքով:

16. Չպարզված օրը դիմումատուները վճռաբեկ բողոք են ներկայացրել Վարչական դատարանի վճռի դեմ՝ պնդելով, *inter alia*, որ խախտվել է ազատ արտահայտվելու իրենց իրավունքը, որը պաշտպանվում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով: Բացի այդ, նրանք պնդել են, որ իրենց նկատմամբ խտրականություն է

դրսետրվել քաղաքական կարծիքի հիմքով՝ խախտելով 14-րդ հոդվածը, քանի որ այն դիվանագետների ու պետական պաշտոնյաների նկատմամբ, որոնք հրապարակային ձևով իրենց աջակցությունն են հայտնել իշխանամետ թեկնածուի համար, երբեւէ որեւէ պատժամիջոցներ չեն կիրառվել. իրենց աշխատանքից ազատելու իրական պատճառը եղել է մարդու իրավունքների եւ ժողովրդավարացման ոլորտում կառավարության գործողությունների վերաբերյալ իրենց քննադատական կարծիքը: Նրանք նաեւ պնդել են, որ իրենց աշխատանքից ազատելը հիմնված է եղել «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի «ժ» ենթակետի եւ 44-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետի սխալ մեկնաբանության վրա, քանի որ վիճարկվող հայտարարությունը տարածելիս իրենք չեն օգտագործել իրենց ծառայողական դիրքն ու աշխատանքային միջոցները: Ավելին, հայտարարությունը չի արվել որեւէ քաղաքական կուսակցության շահերից ելնելով եւ, որպես այդպիսին, չի կարող որակվել որպես քաղաքական գործունեություն:

17. 2008 թվականի սեպտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանը որոշել է հիմքերի բացակայության պատճառով անընդունելի ճանաչել դիմումատուի վճռաբեկ բողոքը:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. 1995 թվականի Սահմանադրությունը (2005 թվականի նոյեմբերի 27-ին ներկայացված փոփոխություններից հետո)

18. Սահմանադրության 27-րդ հոդվածով նախատեսվում է, որ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

19. 43-րդ հոդվածով նախատեսվում է, որ Սահմանադրության, *inter alia*, 27-րդ հոդվածով ամրագրված հիմնական իրավունքները եւ ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար:

Բ. «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքը

20. «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 4-րդ հոդվածի համաձայն (որն ուժի մեջ էր մտել 2001 թվականի դեկտեմբերի 12-ին եւ տվյալ ժամանակահատվածում գործում էր)՝ դիվանագիտական ծառայության խնդիրներն են՝ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականություն իրականացնելը, միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերը եւ իրավունքները պատշաճ ու հետեւողական ներկայացնելը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների եւ իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելը:

21. Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիվանագիտական էթիկան խախտելու դեպքում դիվանագետի նկատմամբ կիրառվում են հետեւյալ կարգապահական տույժերը.

ա) նախազգուշացում.

բ) նկատողություն.

գ) խիստ նկատողություն.

դ) օրենքով սահմանված կարգով աշխատավարձի իջեցում (մինչեւ երեք ամիս ժամկետով):»:

22. Օրենքի 40-րդ հոդված 1-ին մասով նախատեսվում են դիվանագիտական ծառայության պաշտոնից ազատելու հիմքերը: Դիվանագետն զբաղեցրած պաշտոնից ազատվում է հետևյալ դեպքերում՝

«...»

ե) սույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «բ»-«դ» կետերով նախատեսված կարգապահական տույժերից որեւէ մեկը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելիս.

...

ժ) սույն օրենքի 44-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները խախտելիս.

...»:

23. Օրենքի 43-րդ հոդվածի «թ» ենթակետով նախատեսվում է, որ դիվանագետի հիմնական պարտականություններից մեկը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դիվանագետի էթիկայի կանոնները պահպանելն է:

24. Օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետի համաձայն՝ դիվանագետն իրավունք չունի իր ծառայողական դիրքը, աշխատանքային միջոցներն օգտագործել կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների (այդ թվում՝ կրոնական միավորումների) շահերի համար, այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնելու համար:

Գ. Կառավարության որոշումը «Դիվանագետի էթիկայի կանոնները հաստատելու մասին»

25. Կառավարության՝ «Դիվանագետի էթիկայի կանոնները հաստատելու մասին» որոշմամբ (2002 թվականի մայիսի 20-ի թիվ 590 որոշում) նախատեսվում է, որ

«3. Սույն կանոնների խախտումն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն:

4. Դիվանագետը պարտավոր է՝

...

գ) հանրորեն (գրավոր կամ բանավոր) չքննադատել պետության եւ իշխանության ներկայացուցիչներին ու նրանց գործողությունները, զերծ մնալ այնպիսի գործողություններից կամ հրապարակային հայտարարություններից, որոնք կասկածի տակ են դնում Հայաստանի Հանրապետության իշխանությունների քաղաքականությունը, Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական կուրսը.

դ) ապահովել դիվանագիտական ծառայության քաղաքական անաչառությունը:

...

6. Դիվանագետը պարտավոր է՝

ա) չստորագրել իր ծառայողական պարտականություններն անձնական կամ երրորդ անձանց (մասնավոր) շահերին, խուսափել այնպիսի վիճակից, որը կարող է առաջացնել ծառայողական պարտականությունների եւ մասնավոր շահերի բախում, մասնավորապես, պահպանել «Դիվանագիտական ծառայության մասին»... օրենքի [inter alia] 44-րդ հոդվածի 1-ին կետի ... «գ» ... ենթակետերով ... նախատեսված սահմանափակումները.

բ) չօգտագործել կամ չչարաշահել պաշտոնեական (ծառայողական) դիրքը եւ աշխատանքային միջոցները կամ ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած կամ ձեռք բերված տեղեկությունները՝ ինչպես անձնական կամ երրորդ անձանց շահերին, այնպես էլ կուսակցությունների ու հասարակական կազմակերպությունների (այդ թվում՝ կրոնական միավորումների) շահերին ծառայեցնելու եւ այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնելու նպատակով.»:

III. ՎԵՐԱԲԵՐԵԼԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԸ

26. Համաձայն Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի՝ «Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների գործունեության վերաբերյալ» թիվ 1609 (2008թ.) բանաձեւի՝ 2008 թվականի նախագահական

ընտրությունները Հայաստանում քաղաքական ճգնաժամի հանգեցրեցին: Բանաձեռում, *inter alia*, ասվում է, որ

«2. Խորհրդարանական վեհաժողովն ավստանքով է նշում, որ նկատված խախտումները եւ թերությունները չնպաստեցին ընտրական գործընթացի նկատմամբ հանրության՝ առանց այն էլ խախտված վստահության մակարդակի բարձրացմանը՝ միաժամանակ հայաստանյան հասարակության մի հատվածի շրջանում հարցեր առաջացնելով ընտրությունների արդյունքի վստահելիության կապակցությամբ: Հանրային վստահության պակասը հիմք դարձավ նախնական արդյունքների հրապարակմանը հաջորդած, թեեւ առանց նախապես պաշտոնական տեղեկացման, խաղաղ ցույցերի համար, որոնք իշխանություններն հանդուրժում էին տասը օրվա ընթացքում:

3. Վեհաժողովը ցավ է հայտնում ոստիկանության եւ ցուցարարների միջեւ բախումների եւ 2008 թվականի մարտի 1-ին բռնության սրացման կապակցությամբ, որի հետեանքով տասը հոգի զոհվեց եւ շուրջ երկու հարյուր մարդ ստացավ մարմնական վնասվածքներ: Մարտի 1-ի ողբերգական իրադարձություններին հանգեցրած բուն հանգամանքների, դրանց նկատմամբ իշխանությունների արձագանքի, այդ թվում՝ 2008 թվականի մարտի 1-ից 20-ը երեւան քաղաքում արտակարգ իրավիճակ մտցնելու եւ ոստիկանության կողմից ենթադրաբար անհամաչափ ուժ գործադրելու հարցը լուրջ տարածայնությունների տեղիք են տալիս եւ պետք է ենթարկվեն վստահելի ու անկախ քննության:

4. Վեհաժողովը դատապարտում է բազմաթիվ անձանց, այդ թվում՝ ընդդիմության ավելի քան հարյուր համախոհների եւ խորհրդարանի երեք անդամների ձերբակալումը եւ շարունակվող կալանավորումն այնպիսի մեղադրանքների հիման վրա, որոնց մի մասն առերեսույթ արհեստական են եւ պայմանավորված քաղաքական շարժառիթներով: Սա նշանակում է իշխանությունների կողմից ընդդիմության *de facto* (փաստացի) հետապնդում:

...

6. Չնայած որ 2008 թվականի մարտի 1-ի ողբերգական իրադարձությունների տեսքով իր կիզակետին հասած՝ հանրային վրդովմունքի պոռթկումը, թերեւս, անակնկալ էր, Վեհաժողովը համարում է, որ ճգնաժամի հիմնարար եւ խորքային պատճառը պետության առանցքային ինստիտուտների անկարողությունն է՝ իրենց գործառույթները կատարելիս լիովին պահպանելու ժողովրդավարական չափանիշները եւ իրավունքի գերակայության ու մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքները: ...»:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

27. Դիմումատուները բողոք են ներկայացրել այն մասին, որ լրատվամիջոցներում իրենց կողմից արված հայտարարություններից հետո իրենց աշխատանքից ազատելը հանգեցրել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված ազատ արտահայտվելու իրենց իրավունքի խախտմանը:

28. Կոնվենցիայի 10-րդ հոդվածը շարադրված է հետևյալ կերպ՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների եւ պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձեականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես եւ այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:»:

29. Կառավարությունը վիճարկել է այդ պնդումը:

Ա. Ընդունելիությունը

30. Դատարանը նշում է, որ այս բողոքը, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով, ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որել է այլ հիմքով: Հետևաբար, այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

ա) Դիմումատուները

31. Ինչ վերաբերում է դիմումատուների ազատ արտահայտվելու իրավունքին միջամտելու օրինականությանը, ապա նրանք ընդունել են, որ «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքը բավարարել է մատչելիության պահանջը, սակայն պնդել են, որ դրանում բացակայել են բավարար ճշգրտությունն ու կանխատեսելիությունը: Օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետով անդրադարձ է կատարվում «այլ քաղաքական գործունեության»-ը, որը որպես եզրույթ անորոշ է, իսկ «քաղաքական» ածականը շատ լայն հասկացություն է, որը ներառում է դիմումատուների սոցիալական եւ մասնագիտական միջավայրում առկա գրեթե ցանկացած գործունեություն: Տվյալ ժամանակահատվածում դրույթը ձեւակերպվել է այնպես, որ դրանում նշված բոլոր տարրերը պետք է առկա լինեին, որպեսզի այն դառնար կիրառելի: Հետևաբար, այն չէր կարող կիրառվել այս դեպքում, որտեղ այդ դրույթում նշված ոչ բոլոր տարրերն էին առկա: Միայն 2010 թվականին այդ Օրենքում կատարված փոփոխություններից հետո այդ դրույթում առկա տարրերից որել մեկի առկայությունը դարձրեց այդ դրույթը կիրառելի: Բացի այդ, դրույթում

բացակայում էր կանխատեսելիությունը, քանի որ մինչև դիմումատուների նկատմամբ կիրառվելն այդ դրույթը դեռևս ոչ ոքի նկատմամբ չէր կիրառվել եւ, այդ պատճառով, հայտնի չէր, թե այն ինչպես պետք է մեկնաբանվեր: Այսպիսով, դիմումատուների ազատ արտահայտվելու իրավունքին միջամտելը սահմանված չի եղել օրենքով, քանի որ «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետում բացակայում էին ճշգրտությունն ու կանխատեսելիությունը: Մյուս կողմից, դիմումատուներն ընդունել են, որ միջամտությունը հետապնդել է պետական ու հասարակական անվտանգությունը պաշտպանելու, ինչպես նաեւ անկարգությունները կանխելու իրավաչափ նպատակ:

32. Ինչ վերաբերում է ժողովրդավարական հասարակությունում դրանց անհրաժեշտությանը, ապա դիմումատուները նշել են, որ իրենց հայտարարությունը խիստ չեզոք քաղաքական բովանդակություն է ունեցել, եւ որ դրա նպատակը եղել է Սահմանադրությամբ եւ Հայաստանի Հանրապետության համար պարտադիր միջազգային պայմանագրերով ամրագրված արժեքներին հասնելը: Այն որեւէ քաղաքական կուսակցության աջակցելու մտադրություն չի ունեցել: Դիմումատուները հայտարարությունը կազմել են որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, այլ ոչ իրենց ծառայողական դիրքից ելնելով: Այն փաստը, որ առաջին դիմումատուն մի քանի դեսպանների հայտարարությունն ստացել է իր էլեկտրոնային փոստի հասցեին, չի կարող օգտագործվել նրա դեմ, քանի որ նա զուտ պասիվ ստացող է եղել: Միջամտությունը չի եղել համաչափ, քանի որ «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետը դիմումատուների նկատմամբ կիրառվել է ընտրողաբար եւ առանց բոլոր անհրաժեշտ, օրենքով սահմանված տարրերի առկայության: Դիմումատուները պնդել են, որ այն պատճառները, որոնց վրա Կառավարությունը հիմնվել է, համապատասխան չեն եղել՝ արդարացնելու համար դիմումատուների ազատ արտահայտվելու իրավունքին միջամտելը եւ ցույց տալու համար, որ դա

եղել է անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում: Դա եղել է հետապնդվող նպատակներին անհամաչափ:

բ) Կառավարությունը

33. Կառավարությունը պնդել է, որ 2008 թվականի փետրվարի 24-ին դիմումատուների կողմից արված հայտարարությունից հետո նրանց պաշտոններից ազատելը համապատասխանել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածին: Նրանց աշխատանքից ազատելը սահմանված է եղել օրենքով, եւ դա հիմնված է եղել, մասնավորապես, «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի «ժ» ենթակետի վրա, որով նախատեսվում էր, որ դիվանագետն զբաղեցրած պաշտոնից ազատվում է սույն օրենքի 44-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումներից որեւէ մեկը խախտելիս: Այդ սահմանափակումներից մեկն այն էր, որ դիվանագետն իրավունք չունի իր ծառայողական դիրքը կամ աշխատանքային միջոցներն օգտագործելու կուսակցությունների կամ հասարակական կազմակերպությունների շահերի համար կամ այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնելու համար: Ի հակադրություն դիմումատուների պնդումների՝ տվյալ ժամանակահատվածում դրույթի տարրերից որեւէ մեկի առկայությունը դրույթը դարձնում էր կիրառելի: Այս Օրենքը եւ՛ մատչելի էր, եւ՛ կանխատեսելի, իսկ դրանում օգտագործված հասկացությունները բավականին հստակ էին: Օրենքը մշակվել է դիվանագիտական ծառայության շրջանակներում հարաբերությունները կարգավորելու համար եւ, հետեւաբար, այն մշակվել է մասնագետների համար: Դիմումատուները 11-15 տարվա աշխատանքային ստաժ են ունեցել որպես դիվանագիտական ծառայության մարմնի անդամներ: Եթե նրանք Օրենքի բովանդակության հետ կապված անորոշություններ են ունեցել, ապա կարող էին խորհուրդ հարցնել Արտաքին գործերի նախարարությունից: Հաշվի առնելով դիմումատուների զբաղեցրած պաշտոններն ու աշխատանքային ստաժը՝ նրանք պետք է տեղեկացված լինեին իրենց ծառայությունը կարգավորող իրավական շրջանակի, այդ թվում՝

սահմանափակումների մասին: Նրանք նաեւ քաջատեղյակ են եղել Հայաստանում տիրող քաղաքական իրադրությանը, իրենց հրապարակային հայտարարության բնույթին ու դրա հնարավոր ազդեցությանը: Դիմումատուները կարող էին եւ պետք է կանխատեսեին իրենց հայտարարության հետեւանքները, հատկապես, երբ սկզբնական հայտարարությունը տարածած դեսպանները նախորդ օրն ազատվել էին իրենց պաշտոններից, եւ նրանց՝ պաշտոններից ազատումը լայնորեն լուսաբանվել էր լրատվամիջոցներով:

34. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուներին աշխատանքից ազատելն իրավաչափ նպատակ է հետապնդել՝ մասնավորապես քաղաքացիական ծառայողների, այդ թվում՝ դիվանագիտական ծառայության մարմնի չեզոքությունը երաշխավորելու նպատակ: «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետով նախատեսված սահմանափակումը մասնագիտացված դիվանագիտական ծառայություն ստեղծելու իրավաչափ նպատակ ունի, որը չպետք է ծանրաբեռնված լինի քաղաքական խնդիրներով, չպետք է հանդուրժի որեւէ քաղաքական ուժի ազդեցություն եւ չպետք է կախված լինի ներքին քաղաքական զարգացումներից ու քաղաքական կոնյուկտուրայում կատարվող փոփոխություններից: Այսպիսով, նպատակը նորանկախ երկրում ժողովրդավարությունը բարձր պահելն ու պետական անվտանգությունը պաշտպանելն է:

35. Ինչ վերաբերում է ժողովրդավարական հասարակությունում դրանց անհրաժեշտությանը, ապա Կառավարությունը պնդել է, որ միջամտությունը եղել է հետապնդվող իրավաչափ նպատակին համաչափ, եւ որ դա արդարացնելու համար ազգային իշխանությունների կողմից ներկայացված պատճառները եղել են «համապատասխան եւ բավարար»: Դիմումատուների հայտարարությունն ունեցել է քաղաքական բովանդակություն եւ կարող էր բացասաբար ազդել Հայաստանի միջազգային համբավի վրա: Իրենց հայտարարության մեջ դիմումատուները գնահատել են քաղաքական գործընթացը, աջակցել են քաղաքական ուժի

քաղաքական ուղղվածությանն ու կասկածի տակ դրել 2008 թվականին կայացած նախագահական ընտրությունները: Նրանք այս քաղաքական գործունեությունն իրականացրել են՝ օգտագործելով իրենց անուններն ու պաշտոնները: Մասնավորապես, ցանկացած հրապարակային հայտարարություն, որը կարվեր առաջին դիմումատուի կողմից, ով Արտաքին գործերի նախարարի մամուլի քարտուղարն էր, կարող էր ամենայն հավանականությամբ ընկալվել որպես նախարարության դիրքորոշում: Դիվանագետները միանգամայն ազատ էին իրենց քաղաքական կարծիքների հարցում այնքանով, քանի դեռ դրանք հրապարակայնորեն չէին հայտարարվել: Բացի այդ, հայտարարությունը քննարկվել էր նաեւ լրատվամիջոցներում, եւ դա խարխլել էր քաղաքական չեզոքությունն ու Արտաքին գործերի նախարարության դիվանագիտական անձնակազմի համբավը: Հետեւաբար, միջամտությունն անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում:

2. *Դատարանի գնահատականը*

ա) Արդյոք միջամտություն եղել է, թե՛ ոչ

36. Դատարանը նշում է, որ չնայած կողմերից ոչ մեկը հատուկ դիրքորոշում չհայտնեց այն հարցի վերաբերյալ, թե արդյոք Կոնվենցիայի 10-րդ հոդվածի իմաստով միջամտություն եղել է, թե ոչ, Դատարանն, այնուամենայնիվ, գտնում է, որ 2008 թվականի փետրվարի 24-ին տարածած հայտարարության հետեւանքով դիմումատուներին աշխատանքից ազատելն հստակորեն համարվում էր միջամտություն նրանց ազատ արտահայտվելու իրավունքին, ինչը երաշխավորվում էր Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետով:

բ) Արդյոք դա սահմանված էր օրենքով եւ իրավաչափ նպատակ էր հետապնդում

37. Դատարանը նշում է, որ, ըստ Կառավարության, վիճարկվող միջոցները հիմք ունեն Հայաստանի Հանրապետության օրենքներում, մասնավորապես՝ «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի «ժ» ենթակետում եւ 44-րդ հոդվածում, եւ այդ դրույթները եւ՝ մատչելի են, եւ՝ կանխատեսելի, իսկ դրանցում կիրառված հասկացությունները՝ բավականին հստակ: Բացի այդ, բողոքի հիմք հանդիսացած միջամտությունն իրավաչափ նպատակ է հետապնդել՝ մասնավորապես քաղաքացիական ծառայողների, այդ թվում՝ դիվանագիտական ծառայության մարմնի չեզոքությունը երաշխավորելու նպատակ: Դիմումատուներն ընդունել են, որ «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքը եղել է մատչելի, սակայն պնդել են, որ դրանում բացակայել են բավարար ճշգրտությունն ու կանխատեսելիությունը: Այնուամենայնիվ, նրանք ընդունել են, որ միջամտությունը հետապնդել է պետական ու հասարակական անվտանգությունը պաշտպանելու, ինչպես նաեւ անկարգությունները կանխելու իրավաչափ նպատակ:

38. Դատարանը կրկին նշում է, որ արտահայտվելու ազատությունը ենթակա է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված բացառությունների: Դատարանն ընդունում է, որ տվյալ դեպքում միջամտության համար հիմք է հանդիսացել «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի «ժ» ենթակետն ու 44-րդ հոդվածը, որը գործել է տվյալ ժամանակահատվածում, եւ որ այդ դրույթները եղել են մատչելի: Այնուամենայնիվ, երբ խոսքը վերաբերում է նշված դրույթների ճշգրտությանն ու կանխատեսելիությանը, կողմերի տեսակետները չեն համընկնում: Հետեւաբար, Դատարանը պետք է ուսումնասիրի՝ արդյոք խնդրո առարկա դրույթները բավարարում են ճշգրտության եւ կանխատեսելիության պահանջները:

39. Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն բավականաչափ ճշգրիտ ձեւակերպված չէ, որպեսզի անհատը կարգավորի իր գործելակերպը. նա պետք է, հարկ եղած դեպքում՝ պատշաճ խորհրդի միջոցով, կարողանա ստեղծված

հանգամանքներում ողջամտության սահմաններում կանխատեսի, թե տվյալ գործողության հետեանքով ինչ հանգամանքներ կարող են ի հայտ գալ: Իհարկե, անհրաժեշտություն չկա այդ հանգամանքները բացարձակ հստակությամբ կանխատեսելու. փորձը ցույց է տալիս, որ դա անհնար է: Բացի այդ, թեև հստակությունը շատ ցանկալի է, այն կարող է չափից դուրս ոչ ճկունություն առաջացնել, իսկ օրենքը պետք է փոփոխվող հանգամանքներին համահունչ լինի: Համապատասխանաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձեւակերպվում են այնպես, որ առավել կամ նվազ չափով անորոշության տարրեր են պարունակում, իսկ դրանց մեկնաբանության ու կիրառության հարցը փորձառության հարց է (տե՛ս *Սանդեյ թայմզն ընդդեմ Միացյալ Թագավորության (թիվ 1)* [*Sunday Times v. the United Kingdom (no. 1)*] գործը, 1979 թվականի ապրիլի 26, § 49, շարք Ա թիվ 30. եւ *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով) *Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի* [*Kokkinakis v. Greece*] գործը, 1993 թվականի մայիսի 25, § 40, շարք Ա թիվ 260-Ա):

40. Ինչ վերաբերում է համապատասխան ժամանակահատվածում խնդրո առարկա դրույթներին, ապա Դատարանը «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի «ժ» ենթակետում երկիմաստություն չի տեսնում. դրանով հստակ նախատեսված է, որ դիվանագետն զբաղեցրած պաշտոնից ազատվում է Օրենքի 44-րդ հոդվածում թվարկված սահմանափակումներից որեւէ մեկը խախտելիս: Ինչ վերաբերում է նշված Օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետին, ապա Դատարանը նշում է, որ Վարչական դատարանը, թվում է, թե դիմումատուների գործողությունները որակել է որպես եւ՝ «այլ քաղաքական գործունեություն» կատեգորիա եւ՝ «ծառայողական դիրքը կամ աշխատանքային միջոցները կուսակցությունների կամ հասարակական կազմակերպությունների շահերի համար օգտագործելու» կատեգորիա: Դատարանը գտնում է, որ վերջին կատեգորիան Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով բավականին հստակ է շարադրված: Ինչ վերաբերում է «այլ քաղաքական գործունեություն» կատեգորիային, ապա իրավացիորեն այս ձեւակերպումն ավելի անորոշ է: Այնուամենայնիվ, ակնհայտ է,

որ այս ընդհանուր վերապահության նպատակն է ընդգրկել բոլոր մյուս հնարավոր իրավիճակները, որոնց նկատմամբ դրույթը կարող է կիրառվել եւ որոնք հատուկ չեն թվարկվել դրույթում:

41. Դատարանը նկատում է, որ «այլ քաղաքական գործունեություն» եզրույթի ճշգրտությունը նաեւ կապված է դրա կանխատեսելիության հետ: Սակայն, նույնիսկ եթե ճշմարիտ լիներ այն, որ տվյալ ժամանակահատվածում՝ 2008 թվականի փետրվար ամսին, «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետի մեկնաբանության վերաբերյալ նախադեպային իրավունք չի եղել, միեւնույնն է, Դատարանը գտնում է, որ դիվանագետին «այլ քաղաքական գործունեության» հիմքով աշխատանքից ազատելը չէր կարող համարվել անկանխատեսելի: Այդ Օրենքն ընդունվել է կարգավորելու համար այն դիվանագետների մասնագիտական գործելակերպը, որոնք հատուկ եւ սահմանափակ խումբ են կազմել: Վիճարկվող իրադարձությունների ժամանակ Օրենքը գործել է մի քանի տարի: Դատարանը համաձայն է Կառավարության այն փաստարկի հետ, որ դիմումատուները, որոնք բոլորն էլ եղել են հմուտ դիվանագետներ եւ որոնք այս ոլորտում աշխատել են 10 տարուց ավելի, չէին կարող պնդել, որ անտեղյակ են եղել նշված դրույթի բովանդակությանը: Եթե նրանք խնդրո առարկա դրույթի գործողության հստակ շրջանակի վերաբերյալ կասկածներ ունենային, ապա կամ պետք է դիմած լինեին դրա բովանդակության վերաբերյալ խորհուրդ ստանալու համար կամ զերծ մնային իրենց հայտարարությունը տարածելուց: Բացի այդ, պարզվում է, որ դեսպանները, որոնք սկզբնական հայտարարությունը տարածել էին նախորդ օրը, դրա հետեւանքով ազատվել էին իրենց պաշտոններից միեւնույն դրույթի հիման վրա: Նույնիսկ եթե դիմումատուներին համապատասխան ժամանակահատվածում հայտնի չի եղել նրանց աշխատանքից ազատվելու փաստը, նրանք պետք է հնարավոր համարեին, որ խնդրո առարկա դրույթի այդպիսի մեկնաբանությունը կարող էր կանխատեսելի լինել: Հետեւաբար, պետք է եզրակացնել, որ «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետը ձեւակերպված է եղել բավականին

հստակորեն՝ բավարարելու համար Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված՝ ճշգրտության եւ կանխատեսելիության պահանջը:

42. Բացի այդ, դիմումատուները նաեւ պնդել են, որ իրենց գործերի նկատմամբ «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետը կիրառելը եղել է սխալ, քանի որ դրա կիրառության համար պահանջվող ոչ բոլոր տարրերն են առկա եղել: Դատարանը կրկին նշում է, որ ազգային դատարանի կողմից փաստի կամ օրենքի ենթադրյալ սխալներին անդրադառնալն իր գործառույթը չէ՝ քանի դեռ եւ այնքանով, որքանով դրանցով չեն խախտվում Կոնվենցիայով պաշտպանվող իրավունքներն ու ազատությունները (տե՛ս, *mutatis mutandis*, *Գարսիա Ռուիզն ընդդեմ Իսպանիայի* [ՄՊ] [*García Ruiz v. Spain* [GC]] գործը, թիվ 30544/96, § 28, ՄԻԵԴ 1999-1): Այս գործում չկան նշաններ, որոնք կփաստեն, որ համապատասխան օրենքը մեկնաբանելիս կամ կիրառելիս ներպետական դատարաններն անցել են Կոնվենցիայով իրենց թույլատրվող սահմանը:

43. Ուստի, Դատարանը եզրակացնում է, որ վիճարկվող միջամտությունը «սահմանված է եղել օրենքով»: Ի հավելումն դրան, չի վիճարկվել, որ միջամտությունը հետապնդել է պետական ու հասարակական անվտանգությունը պաշտպանելու, ինչպես նաեւ անկարգությունները կանխելու իրավաչափ նպատակ՝ 10-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով (տե՛ս վերելում՝ 31-րդ եւ 34-րդ պարբերությունները):

գ) Արդյոք միջամտությունն անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում

ի) Ընդհանուր սկզբունքները

44. Դատարանը կրկին նշում է, որ արտահայտվելու ազատությունը ժողովրդավարական հասարակության հիմնաքարերից մեկն է եւ դրա առաջընթացի

ու յուրաքանչյուր անհատի ինքնաիրացման հիմնական պայմաններից մեկը: Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դա տարածվում է ոչ միայն այն «տեղեկությունների» կամ «գաղափարների» վրա, որոնք ընդունվում են բարեհաճությամբ կամ համարվում են ոչ վիրավորական կամ պարզապես անտարբերությամբ հնչեցված, այլև՝ վիրավորական, ցնցող կամ անհանգստացնող արտահայտությունների վրա. այդպիսիք են բազմակարծություն, հանդուժողականություն եւ լայն մտածելակերպ պահանջող արտահայտությունները, առանց որոնց «ժողովրդավարական հասարակություն» լինել չի կարող: Արտահայտվելու ազատությունը, ինչպես շարադրված է 10-րդ հոդվածում, ենթակա է մի շարք բացառությունների, որոնք, սակայն, պետք է նեղ մեկնաբանություն ստանան, եւ ցանկացած սահմանափակման անհրաժեշտություն պետք է համոզիչ կերպով հիմնավորվի (տե՛ս, օրինակ՝ *Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության [Handyside v. the United Kingdom]* գործը, 1976 թվականի դեկտեմբերի 7, § 49, շարք Ա թիվ 24. *Լինգենսն ընդդեմ Ավստրիայի [Lingens v. Austria]* գործը, 1986 թվականի հուլիսի 8, § 41, շարք Ա թիվ 103. եւ *Յերսիլդն ընդդեմ Դանիայի [Jersild v. Denmark]* գործը, 1994 թվականի սեպտեմբերի 23, § 37, շարք Ա թիվ 298):

45. Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով՝ «անհրաժեշտ» ածականը ենթադրում է ծայրահեղ սոցիալական անհրաժեշտության առկայություն: Պայմանավորվող պետություններին վերապահված է հայեցողական լիազորությունների որոշակի շրջանակ՝ գնահատելու այդպիսի անհրաժեշտության առկայությունը, սակայն դա սերտորեն փոխկապակցված է եվրոպական վերահսկողության հետ, որն ընդգրկում է դա կիրառող օրենքներն ու որոշումները՝ անգամ այն որոշումները, որոնք կայացվել են անկախ դատարանների կողմից: Հետեւաբար, Դատարանը լիազորված է վերջնական որոշումներ կայացնելու այն հարցի վերաբերյալ, թե արդյոք «սահմանափակումը» համատեղելի է 10-րդ հոդվածով պաշտպանվող՝ արտահայտվելու ազատության հետ:

46. Դատարանի խնդիրը իր վերահսկողական իրավասությունն իրականացնելիս իրավասու ազգային մարմիններին փոխարինելը չէ, այլ այն

որոշումները 10-րդ հոդվածին համապատասխան վերանայելը, որոնք նրանք կայացնում են՝ գնահատելու իրենց իրավասությանը համապատասխան: Սա չի նշանակում, որ վերահսկողությունը սահմանափակվում է Պատասխանող պետությունների կողմից՝ իրենց հայեցողության խելամիտ, ճշգրիտ եւ բարեխիղճ կիրառումը հաստատելով. փոխարենը՝ Դատարանը պետք է բողոքի առարկա միջամտությունն ուսումնասիրի տվյալ գործի շրջանակներում՝ այն դիտարկելով որպես մեկ ամբողջություն եւ որոշի, թե արդյոք այն «համաչափ է եղել հետապնդվող իրավաչափ նպատակներին» եւ արդյոք այն արդարացնելու համար ազգային իշխանությունների կողմից ներկայացված հիմնավորումները «տեղին են եւ բավարար» (տե՛ս *Սանդեյ թայմզն ընդդեմ Միացյալ Թագավորության (թիվ 2)* [*The Sunday Times v. the United Kingdom (no. 2)*], 1991 թվականի նոյեմբերի 26, § 50, շարք Ա թիվ 217): Այդպիսով, Դատարանը պետք է հավաստիանա, որ ազգային իշխանությունները կիրառել են 10-րդ հոդվածում ներառված սկզբունքներին համապատասխանող չափանիշներ եւ, բացի այդ, իրենց որոշումները կայացնելիս հիմնվել են համապատասխան փաստերի ընդունելի գնահատման վրա (տե՛ս *Յերսիլդն ընդդեմ Դանիայի* գործը՝ վերելում հիշատակված, § 31):

47. Թեեւ Դատարանն ընդունել է, որ պետության կողմից քաղաքացիական ծառայողների վրա, իրենց կարգավիճակի հետ կապված, գաղտնապահության պարտավորություն դնելն իրավաչափ է, այնուամենայնիվ, քաղաքացիական ծառայողներն անհատներ են եւ, որպես այդպիսին, իրավունք ունեն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պաշտպանության (տե՛ս *Ֆոգթն ընդդեմ Գերմանիայի* [*Vogt v. Germany*] գործը, 1995 թվականի սեպտեմբերի 26, § 53, շարք Ա թիվ 323. եւ *Բական ընդդեմ Հունգարիայի* [ՄՊ] [*Baka v. Hungary [GC]*] գործը, թիվ 20261/12, § 140, ՄԻԵԴ 2016 թվական): Հետեւաբար, Դատարանի խնդիրն է, հաշվի առնելով յուրաքանչյուր գործի հանգամանքները, որոշել, թե արդյոք անհատի՝ ազատ արտահայտվելու հիմնարար իրավունքի եւ ժողովրդավարական պետության իրավաչափ շահի միջեւ արդար հավասարակշռություն է հաստատվել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետում թվարկված նպատակներին հասնելու

գործում իր քաղաքացիական ծառայության կողմից պատշաճ աջակցություն ցուցաբերելու գործոնն ապահովելու հարցում:

48. Դատարանը այս հարցն ուսումնասիրելիս պետք է հիշի, որ երբ հարց է բարձրացվում քաղաքացիական ծառայողի ազատ արտահայտվելու իրավունքի վերաբերյալ, ապա Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետում նշված «պարտավորություններն ու պատասխանատվությունը» հատուկ կարեւորություն են ստանում, որն արդարացնում է վիճարկվող միջամտությունը վերոհիշյալ նպատակին համաչափ լինելու հարցը որոշելիս ազգային իշխանություններին հայեցողական լիազորությունների որոշակի շրջանակ թողնելը (տե՛ս *Ֆոգթի* գործը՝ վերելում հիշատակված, § 53. *Ալբայրաքն ընդդեմ Թուրքիայի* [*Albayrak v. Turkey*] գործը, թիվ 38406/97, § 41, 2008 թվականի հունվարի 31. եւ *Բակայի* գործը՝ վերելում հիշատակված, § 162): Այս առումով, Դատարանը համարում է, որ հստակ կատեգորիայի քաղաքացիական ծառայողների քաղաքական չեզոքությունը պահպանելու անհրաժեշտությանն ուղղված միջոցները կարող են սկզբունքորեն իրավաչափ եւ համաչափ համարվել՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի շրջանակներում (տե՛ս *Ահմեդն ու այլոք ընդդեմ Միացյալ թագավորության* [*Ahmed and Others v. the United Kingdom*] գործը, 1998 թվականի սեպտեմբերի 2, § 63, *Վճիռների եւ որոշումների մասին զեկույցներ* 1998-VI): Այնուամենայնիվ, այդպիսի միջոցը չպետք է կիրառվի ընդհանուր ձեւով, ինչը կարող է ազդել պաշտպանվող իրավունքի էության վրա՝ առանց հաշվի առնելու խնդրո առարկա քաղաքացիական ծառայողի գործառույթներն ու դերը եւ, մասնավորապես, յուրաքանչյուր դեպքի հանգամանքները (տե՛ս, *mutatis mutandis*, *Քյուչյուկբալաբան եւ Քուտլուն ընդդեմ Թուրքիայի* [*Küçükbalaban and Kutlu v. Turkey*] գործը, թիվ 29764/09 եւ 36297/09, § 34, 2015 թվականի մարտի 24. եւ *Դեդեկանն ու Օքն ընդդեմ Թուրքիայի* [*Dedecan and Ok v. Turkey*] գործը, թիվ 22685/09 եւ 39472/09, § 38, 2015 թվականի սեպտեմբերի 22):

49. Ավելին, Դատարանը, հաշվի առնելով հասարակության մեջ դիվանագետների դերը, ճանաչել է, որ ժողովրդավարական հասարակությունում

քաղաքացիական ծառայողներից՝ այդ թվում եւ դիվանագիտական ծառայության մարմնից կազմված՝ քաղաքական առումով չեզոք մարմին ունենալն իրավաչափ նպատակ է: Հաշվի առնելով Պայմանավորվող որոշ պետությունների բացառիկ պատմությունը՝ այդ պետությունների ազգային իշխանությունները, ժողովրդավարության կոնսոլիդացումն ու պահպանումն ապահովելու համար, կարող են անհրաժեշտ համարել այդ նպատակին հասնելու համար սահմանադրական երաշխիքներ ունենալ՝ քաղաքացիական ծառայողների կողմից քաղաքական գործունեություն իրականացնելու ազատությունը սահմանափակելու միջոցով (տե՛ս, *mutatis mutandis*, *Ռեկվենյին ընդդեմ Հունգարիայի* [ՄՊ] [*Rekvényi v. Hungary* [GC]] գործը՝ վերելում հիշատակված, § 46): Այսպիսով, ժողովրդավարական պետությունն իրավունք ունի պահանջելու, որպեսզի քաղաքացիական ծառայողները հավատարիմ լինեն սահմանադրական սկզբունքներին, որոնց վրա ծառայությունը հիմնված է (տե՛ս *Ֆոզթն ընդդեմ Գերմանիայի* գործը՝ վերելում հիշատակված, § 59):

50. Դատարանը գտել է, որ քաղաքացիական ծառայողի եւ պետության՝ որպես գործատուի միջեւ վստահության եւ հավատարմության առանձնահատուկ կապը կարելի է՝ մասնավորապես այն դիվանագետների դեպքում, որոնք, ակնկալվում է, որ պետք է առավելագույնս հավատարիմ լինեն պետությանը: Սա հատկապես կարելի է այն հասարակություններում, որոնք գտնվում են բազմակարծիք ժողովրդավարության ինստիտուտներ կառուցելու գործընթացում (տե՛ս, *mutatis mutandis*, *Ռեկվենյին ընդդեմ Հունգարիայի* [ՄՊ] գործը՝ վերելում հիշատակված, § 47):

ii) Վերոնշյալ սկզբունքների կիրառումը սույն գործի նկատմամբ

51. Անդրադառնալով այս գործի փաստերին՝ Դատարանը համարում է, որ վերոնշյալ սկզբունքների լույսի ներքո այս գործը քննելիս այն պետք է հաշվի առնի այն հանգամանքներն ու ընդհանուր նախապատմությունը, որոնցից

ելնելով, դիմումատուները կազմել են իրենց հայտարարությունը: Այն պետք է միջամտությունն ուսումնասիրի տվյալ գործի շրջանակներում՝ այն դիտարկելով որպես մեկ ամբողջություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով դիմումատուների զբաղեցրած պաշտոններին, նրանց հայտարարությունների ձևին և բովանդակությանը և, մասնավորապես, այն համատեքստին, որում կազմվել են դրանք (տե՛ս *Բակայի* գործը՝ վերելում հիշատակված, § 166): Դատարանի խնդիրն է որոշել, թե արդյոք դիմումատուներին աշխատանքից ազատելը համապատասխանել է «ծայրահեղ սոցիալական անհրաժեշտությանը» և արդյոք դա «համաչափ է եղել հետապնդվող իրավաչափ նպատակներին»:

52. Կառավարության պնդման համաձայն՝ դիմումատուներն իրենց հայտարարության մեջ գնահատել են քաղաքական գործընթացը, աջակցել են քաղաքական ուժի քաղաքական ուղղվածությանն ու կասկածի տակ դրել 2008 թվականին կայացած նախագահական ընտրությունները՝ օգտագործելով իրենց անուններն ու պաշտոնները: Կառավարության տեսանկյունից՝ դիվանագետները միանգամայն ազատ են եղել իրենց քաղաքական կարծիքների հարցում՝ քանի դեռ դրանք հրապարակայնորեն չեն հայտարարվել (տե՛ս վերելում՝ 35-րդ պարբերությունը):

Դիմումատուները չհամաձայնեցին Կառավարության հետ՝ նշելով, որ իրենց հայտարարությունը խիստ չեզոք քաղաքական բովանդակություն է ունեցել, և որ դրա նպատակը եղել է Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության համար պարտադիր միջազգային պայմանագրերով ամրագրված արժեքների ձեռքբերումը: Այն չի կազմվել որեւէ քաղաքական կուսակցության աջակցելու նպատակով: Դիմումատուները պնդել են, որ այն պատճառները, որոնց վրա Կառավարությունը հիմնվել է, չեն եղել համապատասխան՝ արդարացնելու համար իրենց ազատ արտահայտվելու իրավունքին միջամտելը և ցույց տալու համար, որ դա անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում (տե՛ս վերելում՝ 32-րդ պարբերությունը):

53. Դատարանը նշում է, որ տվյալ գործում միակ գործողությունը, որը ներպետական դատարանները համարել են որպես քաղաքական եւ որը հանգեցրել է դիմումատուներին իրենց զբաղեցրած պաշտոններից ազատելուն, եղել է այն փաստը, որ նրանք վիճարկվող հայտարարությունը հրապարակել են 2008 թվականի փետրվարի 24-ին: Որպես հետեւանք՝ հաջորդ օրը՝ 2008 թվականի փետրվարի 25-ին, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարն առաջին, երկրորդ եւ երրորդ դիմումատուներին աշխատանքից ազատելու վերաբերյալ հրամաններ է ընդունել: Չորրորդ դիմումատուն աշխատանքից ազատվել է նույնանման հրամանով՝ 2008 թվականի մարտի 3-ին (տե՛ս վերելում՝ 12-րդ պարբերությունը):

54. Ի սկզբանե Դատարանն իր գնահատման մեջ հույժ կարեւոր է համարում, որ չորս դիմումատուներից բոլորն էլ Արտաքին գործերի նախարարությունում բարձր պաշտոններ են զբաղեցրել եւ որ նրանց անուններն իրենց պաշտոնների անվանումներին արված բացահայտ հղումով հայտնվել են վիճարկվող հայտարարության տակ (տե՛ս վերելում՝ 6-րդ եւ 11-րդ պարբերությունները): Հետեւաբար, իր նախադեպային իրավունքի լույսի ներքո (տե՛ս վերելում՝ 47-50-րդ պարբերությունները) Դատարանը համարում է, որ Պատասխանող պետությունն իրավունք ուներ կարգապահական վարույթ հարուցելու եւ պաշտոնանկությունները շարունակելու վերաբերյալ իր գնահատման մեջ ուշադրություն դարձնելու այն պահանջին, որ բարձրաստիճան քաղաքացիական ծառայողները, ինչպիսիք են դիմումատուները, իրենց գործառույթներն իրականացնելիս պետք է հարգեին եւ ապահովեին իրենց ու Պետության միջեւ վստահության եւ հավատարմության առանձնահատուկ կապը:

55. Բացի այդ, Դատարանը նշում է, որ 2008 թվականի փետրվարի 24-ին իրենց հրապարակած հայտարարության մեջ (տե՛ս վերելում՝ 10-րդ պարբերությունը) դիմումատուները հատուկ հղում են կատարել նախորդ օրը ՀՀ մի քանի դեսպանների տարածած հայտարարությանը (տե՛ս վերելում՝ 8-րդ պարբերությունը)՝ բացահայտ հայտարարելով, որ իրենք միանում են այդ հայտարարությանը: Ապա դիմումատուների հայտարարության մեջ «վրդովմունք» է արտահայտվել

«ընտրական գործընթացի խախտումների առնչությամբ» եւ «պահանջ» է ներկայացվել միջազգային զեկույցներում տեղ գտած «առաջարկություններն իրականացնելու ուղղությամբ անհապաղ քայլեր ձեռնարկելու»: Այսպիսով, Դատարանը համարում է, որ այն չի կարող կասկածի տակ դնել Վարչական դատարանի եզրակացությունը, համաձայն որի դիմումատուների վիճարկվող հայտարարությունը «քաղաքական գործընթացներ է շոշափել, քանի որ այն պարունակել է քաղաքական գնահատական՝ ընտրությունների եւ հետընտրական իրադարձությունների վերաբերյալ» (տե՛ս վերելում՝ 15-րդ պարբերությունը):

56. Դատարանը նաեւ նշում է, որ դիմումատուներն իրենց պաշտոնանկության հարցը դատական կարգով վերանայելու, բողոքարկելու եւ իրենց պաշտոններին վերադառնալու հարցերով վարույթ են հարուցել: Դիմումատուների հայցերը քննելիս Վարչական դատարանը գտել է, որ դիմումատուները, հրապարակված հայտարարության մեջ իրենց պաշտոնների անվանումները նշելով, օգտագործել են իրենց պաշտոնական դիրքը: Դրա հետեւանքով ներպետական դատարանը գտել է, որ նրանց՝ Սահմանադրության 27-րդ հոդվածով պաշտպանվող ազատ արտահայտվելու իրավունքը չի խախտվել՝ ելնելով Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված սահմանափակման դրույթից: Դատարանի կարծիքով սա ցույց է տալիս, որ ներպետական դատարանը դիմումատուների հայցերի իր ընդհանուր գնահատման մեջ հաշվի է առել դիմումատուների ազատ արտահայտվելու իրավունքը բավարար չափով՝ Կոնվենցիայի պահանջներին համապատասխան:

57. Վերջապես, իր գնահատման մեջ Դատարանը հատուկ կարեւորություն է տալիս այն ընդհանուր ներպետական համատեքստին, որի մեջ դիմումատուները հրապարակել են իրենց հայտարարությունները՝ նշելով իրենց պաշտոնների անվանումները: Այդ համատեքստում քաղաքական ճգնաժամ է նկատվում (տե՛ս, *inter alia*, վերելում՝ 26-րդ պարբերության մեջ հիշատակված՝ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի՝ «Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների գործունեության վերաբերյալ» թիվ 1609 (2008թ.) բանաձեւը):

58. Դատարանը վերստին նշում է, որ, քանի որ քաղաքացիական ծառայողները, ինչպես եւ մնացած բոլոր անհատները, Կոնվենցիայի 10-րդ հոդվածին համապատասխան, օգտվում են իրենց կարծիքն ու գաղափարներն ազատ արտահայտելու իրավունքից (տե՛ս *Բակայի* գործը՝ վերելում հիշատակված, § 140), ապա Պայմանավորվող պետությունները պետք է որոշակի ազատություն թույլ տան քաղաքացիական ծառայողներին ներքին հասարակական բանավեճերին մասնակցելու համար, մասնավորապես, երբ նրանց փորձն ու մասնագիտական փորձառությունը կարող են նպաստել հանրային շահերից բխող եւ կարելոթություն ներկայացնող հարցերի վերաբերյալ տեղեկացված բանավեճերին: Այնուամենայնիվ, այս գործով դիմումատուների կարգավիճակը տարբերվում է *Բակայի* գործով դիմումատուի կարգավիճակից: Ի տարբերություն այս դիմումատուների՝ *Բակայի* գործը վերաբերում էր պետական մի ծառայողի, ով որպես Ազգային արդարադատության խորհրդի նախագահ՝ դատական համակարգին առնչվող օրենսդրական բարեփոխումների վերաբերյալ իր կարծիքն արտահայտելու հատուկ՝ օրենքով սահմանված պարտականություն ուներ (տե՛ս *Բակայի* գործը՝ վերելում հիշատակված, § 168):

59. Դատարանը հիշեցնում է, որ, ինչպես նախկինում նշել է, հաշվի առնելով Պայմանավորվող որոշ պետությունների բացառիկ պատմությունը՝ այդ պետությունների ազգային իշխանությունները, ժողովրդավարության կոնսոլիդացումն ու պահպանումն ապահովելու համար, կարող են անհրաժեշտ համարել սահմանադրական երաշխիքներ ունենալ՝ ժողովրդավարական հասարակությունում քաղաքացիական ծառայողների, այդ թվում՝ դիվանագիտական մարմինների՝ քաղաքական առումով չեզոք մարմին ունենալու նպատակին հասնելու համար՝ քաղաքացիական ծառայողների կողմից քաղաքական գործունեություն իրականացնելու ազատությունը սահմանափակելու միջոցով (տե՛ս վերելում՝ 49-րդ պարբերությունը): Սույն գործի առանձնահատուկ հանգամանքները որպես մեկ ամբողջություն դիտարկելով՝ Դատարանը համարում է, որ չի ներկայացվել որեւէ ապացույց, որը կարող էր կասկածի տակ դնել այս հարցով Պատասխանող պետության գնահատականը:

60. Ինչ վերաբերում է պատասխանատվության միջոցին, ապա Դատարանը համարում է, որ դիմումատուներին աշխատանքից ազատելը, թեև խիստ, սակայն չի կարող անհամաչափ միջոց համարվել՝ հաշվի առնելով սույն գործի առանձնահատուկ հանգամանքներն ու ներպետական օրենսդրությամբ նախատեսված հնարավոր տարբերակները:

61. Այսպիսի պայմաններում, հաշվի առնելով վերը նկարագրված բոլոր տարրերը, Դատարանը գտնում է, որ Կառավարությունն ապացուցել է, որ դիմումատուների նկատմամբ կիրառված միջոցները հիմնված են եղել համապատասխան եւ բավարար հիմքերի վրա եւ եղել են հետապնդվող իրավաչափ նպատակին համաչափ:

62. Համապատասխանաբար, Դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

II. ԳԱՆԳԱՏԻ ՄՆԱՑԱԾ ՄԱՍԸ

63. Դիմումատուները նաեւ բողոք են ներկայացրել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի մասով, ըստ որի Վարչական դատարանը չի գործել անկախ եւ անկողմնակալ, քանի որ այն չի կիրառել օրենքն ու ապացույցները չի գնահատել պատշաճ կերպով: Բացի այդ, դիմումատուների համար չէր ապահովվել դատարանի մատչելիության իրավունքը, քանի որ նրանց վճռաբեկ բողոքը հիմքերի բացակայության պատճառով անընդունելի ճանաչելիս Վճռաբեկ դատարանը որեւէ հիմնավորում չէր ներկայացրել: Դիմումատուներն այնուհետեւ բողոք են ներկայացրել Կոնվենցիայի 14-րդ հոդվածի մասով, ըստ որի, իրենց նկատմամբ խտրականություն է դրսևորվել քաղաքական կարծիքի հիմքով:

64. Հաշվի առնելով իր տրամադրության տակ ունեցած նյութերը՝ Դատարանը գտնում է, որ բողոքարկվող փաստերը դիմումատուների՝ Կոնվենցիայով սահմանված իրավունքների խախտման որեւէ հատկանիշ չեն բացահայտում: Հետեւաբար, գանգատի այս մասն ակնհայտորեն անհիմն է եւ

պետք է մերժվի՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի եւ 4-րդ կետի:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ

1. Միաձայն *հայտարարում է* Կոնվենցիայի 10-րդ հոդվածի վերաբերյալ բողոքն ընդունելի, իսկ գանգատի մնացած մասը՝ անընդունելի.
2. ձայների՝ վեց կողմ եւ մեկ դեմ հարաբերակցությամբ, *վճռում է*, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2016 թվականի նոյեմբերի 17-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Աբել Կամպոս

Միրյանա Լազարովա Տրայկովսկա

Քարտուղար

Նախագահ

Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ կետին եւ Դատարանի կանոնակարգի 74-րդ կանոնի 2-րդ կետին համապատասխան՝ այս վճռին կից ներկայացվում են հետեւյալ առանձին կարծիքները՝

ա) դատավորներ Սիցիլիանոսի եւ Մահոնիի համընկնող կարծիքը,

բ) դատավոր Լազարովա Տրայկովսկայի չհամընկնող կարծիքը:

Մ.Լ.Տ.

Վ.Դ.

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ՍԻՑԻԼԻԱՆՈՍԻ ԵՎ ՄԱՀՈՆԻԻ ՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

Մենք քվեարկել ենք մեծամասնության հետ՝ մնալով այն կարծիքին, որ Դատարանի տրամադրության տակ առկա նյութերի հիման վրա Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում գտնել հնարավոր չէ: Այնուամենայնիվ, մենք պետք է նախապատվությունը տայինք, որ, հստակության համար, վճիռն ավելի մանրամասն պատճառաբանություն պարունակեր՝ կապված դիմումատուների ազատ արտահայտվելու իրավունքին միջամտելու համաչափության հարցի հետ:

Վճռի 60-րդ պարբերությունը շարադրված է հետևյալ կերպ՝

«Ինչ վերաբերում է պատասխանատվության միջոցին, ապա Դատարանը համարում է, որ դիմումատուներին աշխատանքից ազատելը, թեև խիստ, սակայն չի կարող անհամաչափ միջոց համարվել՝ հաշվի առնելով սույն գործի առանձնահատուկ հանգամանքներն ու օրենսդրությամբ նախատեսված հնարավոր տարբերակները:»:

Ընդհանուր պնդում է՝ եզրակացությանը հանգելու հիմքերի միակ նշումը «դեպքի առանձնահատուկ հանգամանքներն» ու «օրենսդրությամբ նախատեսված հնարավոր տարբերակներն» էին:

Վերջին նշումը հավանաբար հղում է «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասին, որը, կարծես, աշխատանքից ազատելը համարում է պատասխանատվության միակ հնարավոր միջոց՝ այդ Օրենքի 44-րդ հոդվածին հակասող վարքագիծ դրսևորելու համար (տես վճռի 21-24-րդ պարբերությունները): Բարդ է հասկանալը, թե ինչպես է օրենքի այդ կողմը, լինելով «օրինականության» հարցին համապատասխան (քննարկվել է վճռի 37-43-րդ պարբերություններում), օրենքին համապատասխան ձեռնարկված անհատական միջոցի համաչափ բնույթը բնորոշող գործոն հանդիսանում: Իսկապես, որոշ դեպքերում կիրառելի օրենքի ճկուն չլինելը կարող է թույլ չտալ պատասխանատվության միջոցները կիրառել ըստ աստիճանական խստացման, որտեղից եւ առաջանում է միջամտության անհամաչափությունը՝ որն արտահայտվում է հայտնաբերված զանցանքի համեմատ չափազանց խիստ պատասխանատվության միջոց կիրառելով:

Ըստ սահմանման՝ յուրաքանչյուր դեպքում համաչափության ստուգման կիրառությունը, ինչպես էլ որ այն ընթանա, կախված է «դեպքի առանձնահատուկ հանգամանքներից»: Եվ, քանի որ այդպես է, վճռի 60-րդ պարբերության մեջ նշված առաջին հիմքը պարզապես պնդում է ակնհայտն ու կայացված եզրակացության համար որեւէ բովանդակային պատճառաբանություն չի առաջարկում: Մեր կարծիքով, այն գործոնները, որոնց վրա իշխանությունները կարող էին հիմնվել՝ դիմումատուների կատարած զանցանքի համար աշխատանքից ազատելը որպես համապատասխան պատասխանատվության միջոց նախատեսելու եւ կիրառելու համար, իրոք հիշատակված էին վճռում՝ 54-րդ պարբերության մեջ, որտեղ Դատարանը նախաբանի ձեւով ընդհանուր ներկայացնում է այս գործի նկատմամբ Կոնվենցիայի համապատասխան սկզբունքները կիրառելու կարելիության փաստական նկատառումները: Այսպիսով՝

«... Պատասխանող պետությունն իրավունք ուներ կարգապահական վարույթ հարուցելու եւ պաշտոնանկությունները շարունակելու վերաբերյալ իր գնահատման մեջ ուշադրություն դարձնելու այն պահանջին, որ բարձրաստիճան քաղաքացիական ծառայողները, ինչպես դիմումատուները, իրենց գործառույթներն իրականացնելիս պետք է հարգեին եւ ապահովեին իրենց ու Պետության միջեւ վստահության եւ հավատարմության առանձնահատուկ կապը:»:

Կարճ ասած՝ մեզ համար պաշտոնից ազատելը որպես համաչափ միջոց կարող էր դարձնել միայն այն փաստը, որ Պետությունը՝ որպես դիմումատուների գործատու, կարողանար ապացուցել, որ իրենց ծառայողական դիրքը քաղաքական նպատակներով հրապարակային ձեւով տարածված հայտարարության մեջ օգտագործելիս դիմումատուները, որպես Արտաքին գործերի նախարարության համեմատաբար ավագ դիվանագետներ, խարխլել են դրա առջեւ ունեցած վստահության եւ հավատարմության առանձնահատուկ կապը:

Հետեւաբար, կնախընտրեինք, որպեսզի դիմումատուների կողմից ազատ արտահայտվելու իրենց իրավունքն իրականացնելուն միջամտության համաչափության վերաբերյալ բացատրությունը ներկայացվեր եւ պարզաբանվեր

60-րդ պարբերության մեջ, այլ ոչ թե ներկայացվել 54-րդ պարբերության մեջ՝ որպես ընդհանուր ներածական նկատառում:

Երկրորդ հերթին նշել ենք դիմումատուների հայտարարության առանցքը հանդիսացող վիճարկվող նախագահական ընտրություններից հետո 2008 թվականի մարտ ամսին Հայաստանում տեղի ունեցած խախտումների վերաբերյալ Խորհրդարանական վեհաժողովի եզրակացության մասին: Այդ եզրակացությունը (Խորհրդարանական վեհաժողովի՝ «Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների գործունեության վերաբերյալ» թիվ 1609 (2008թ.) բանաձևի 6-րդ կետ, որը մեջքերված է վճռի 26-րդ պարբերության մեջ) շարադրված է հետևյալ կերպ՝

«Չնայած որ 2008 թվականի մարտի 1-ի ողբերգական իրադարձությունների տեսքով իր կիզակետին հասած՝ հանրային վրդովմունքի պոռթկումը, թերեւս, անակնկալ էր, Վեհաժողովը համարում է, որ ճգնաժամի հիմնարար եւ խորքային պատճառը պետության առանցքային ինստիտուտների անկարողությունն է՝ իրենց գործառույթները կատարելիս լիովին պահպանելու ժողովրդավարական չափանիշները եւ իրավունքի գերակայության ու մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքները: ...»:

Ինչպես երեւում է, նախքան Երկրորդ համաշխարհային պատերազմը եւ դրանից հետո Եվրոպական որոշ պետություններում գործող տոտալիտար ռեժիմի տխուր օրինակից՝ ծայրահեղ դեպքերում իշխանությունների կողմից մարդու իրավունքների չարաշահումներ իրականացնելու հարցում քաղաքացիական ծառայողների ոչ միայն ակտիվ համագործակցությունը, այլ նույնիսկ նրանց պասիվությունն այդպիսի չարաշահումների նկատմամբ, կարող է մարդու իրավունքների առումով դատապարտելի լինել:

Թերեւս այս գործով դիմումատուները չեն պնդել, որ իրենց գործի փաստերը նման ծայրահեղ դեպքի օրինակ են: Օրինակ՝ նրանք չեն վիճարկել, որ թեւս 2008 թվականի փետրվարի 24-ի իրենց «քաղաքական» գործունեությունը 10-րդ հոդվածի 2-րդ կետում նշված առհասարակ գործող «ժողովրդավարական հասարակությունում» կարող էր առաջին հայացքից ենթակա լինել՝

արդարացնելու համար կարգապահական այնպիսի խիստ միջոց, ինչպիսին աշխատանքից ազատելն է, այդուհանդերձ դա արվել է, Խորհրդարանական վեհաժողովի խոսքերով՝ ի պաշտպանություն «ժողովրդավարական չափանիշների եւ իրավունքի գերակայության ու մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների»: Եթե դիմումատուներն որեւէ այդպիսի փաստարկ ներկայացնեին բավականին արժանահավատ նյութերի հիման վրա, ապա Դատարանի կողմից 10-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխանության ստուգման հարցը կարող էր անկասկած ավելի խիստ դրված լինել: Թերեւս տվյալ պահին այդ կապակցությամբ դիմումատուների փաստարկներն ավելի շատ ուղղված էին ցույց տալու, որ իրենց հայտարարությունը եղել է չեզոք եւ, ըստ էության, ոչ «քաղաքական» (տե՛ս վճռի 32-րդ պարբերությունը): Հենց այդ հիմքով է, որ, ինչպես մեր կոլեգաները, մենք նույնպես միացել ենք վճռի 59-րդ պարբերության մեջ արված եզրակացությանն այն մասին, որ «չի ներկայացվել որեւէ ապացույց, որը կարող էր կասկածի տակ դնել Պատասխանող պետության գնահատականը» դիմումատուների՝ «քաղաքական» գործողություններին մասնակցելու ազատությունը սահմանափակելու առնչությամբ:

ԴԱՏԱՎՈՐ ԼԱԶԱՐՈՎԱ ՏՐԱՅԿՈՎԱՍԿԱՅԱՅԻ ՉՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

Ցավում եմ, որ չեմ կարող համաձայնել այն եզրակացության հետ, որ այս գործում 10-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել. ըստ իս՝ այս գործը պետք է ուղարկվի Մեծ պալատ:

Ազատ արտահայտվելը ժողովրդավարական հասարակության կարևոր հիմքերից մեկն է (տե՛ս *Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 1976 թվականի դեկտեմբերի 7-ի վճիռը, § 49, շարք Ա թիվ 24): Թեև պետության կողմից քաղաքացիական ծառայողների վրա, իրենց կարգավիճակի հետ կապված, գաղտնապահության պարտավորություն դնելն իրավաչափ է, այնուամենայնիվ, քաղաքացիական ծառայողներն անհատներ են եւ, որպես այդպիսիք, իրավունք ունեն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պաշտպանության (տե՛ս *Բական ընդդեմ Հունգարիայի* [ՄՊ] գործը, թիվ 20261/12, § 140, ՄԻԵԴ 2016 թվական): Քաղաքացիական ծառայողի կարգավիճակն անձին չի զրկում Կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունից: Այդպիսի դեպքերում Դատարանի խնդիրն է, հաշվի առնելով յուրաքանչյուր գործի հանգամանքները, որոշել, թե արդյոք անհատի՝ ազատ արտահայտվելու հիմնարար իրավունքի եւ ժողովրդավարական պետության իրավաչափ շահերի միջեւ արդար հավասարակշռություն է հաստատվել՝ 10-րդ հոդվածի 2-րդ կետում թվարկված նպատակներին հասնելու գործում իր քաղաքացիական ծառայության կողմից պատշաճ աջակցություն ցուցաբերելու գործոնն ապահովելու հարցում (տե՛ս *Ֆոգթն ընդդեմ Գերմանիայի* գործը, 1995 թվականի սեպտեմբերի 26, § 53, շարք Ա թիվ 323):

Ես համաձայն եմ մեծամասնության հետ, որ 2008 թվականի փետրվարի 24-ին դիմումատուների հրապարակած հայտարարության արդյունքում նրանց իրենց պաշտոններից ազատելը միանգամայն համարվում է միջամտություն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորվող՝ ազատ արտահայտվելու իրենց իրավունքին: Կարող եմ նաեւ ընդունել, որ այս միջամտությունը սահմանված է եղել օրենքով եւ իրավաչափ նպատակ է

հետապնդել: Մեծամասնության հետ համամիտ չեմ՝ վիճարկվող միջամտության անհրաժեշտության եւ համաչափության վերաբերյալ Պալատի ներկայացրած փաստարկի առնչությամբ:

Մասնավորապես, իմ կարծիքով, Վարչական դատարանը չի պահպանել դիմումատուների՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված ազատ արտահայտվելու իրավունքի եւ Պետության շահերի միջեւ հավասարակշռությունը: Վարչական դատարանի պատճառաբանությունից չի հասկացվում, թե ինչ «ծայրահեղ սոցիալական անհրաժեշտության» կա այս գործում, որը, լինելով հետապնդվող իրավաչափ նպատակին համաչափ, կհիմնավորեր Պետության շահերի պաշտպանությունը դիմումատուների ազատ արտահայտվելու իրավունքից վեր դասելը:

Բացի այդ, համամիտ չեմ մեծամասնության հետ այն հարցում, որ դիմումատուներին աշխատանքից ազատելը, որպես խստագույն միջոց, չի կարող անհամաչափ միջոց համարվել՝ հաշվի առնելով սույն գործի առանձնահատուկ հանգամանքներն ու ներպետական օրենսդրությամբ նախատեսված հնարավոր տարբերակները: Այս կապակցությամբ նշում եմ, որ Դատարանն աշխատանքից ազատելը սովորաբար համարում է շատ կտրուկ միջոց, հատկապես երբ այլ՝ ավելի մեղմ եւ ավելի համապատասխան կարգապահական տույժեր կարող էին կամ պետք է նախատեսված լինեին (տե՛ս, օրինակ՝ այլ համատեքստում՝ *Գուժան ընդդեմ Մոդլովայի* [ՄՊ] [*Guja v. Moldova* [GC]] գործը, թիվ 14277/04, § 95, ՄԻԵԴ 2008 թվական. *Ֆուենտես Բոբոն ընդդեմ Իսպանիայի* [*Fuentes Bobo v. Spain*] գործը, թիվ 39293/98, § 48, 2000 թվականի փետրվարի 29, եւ *Կուդեշկինան ընդդեմ Ռուսաստանի* [*Kudeshkina v. Russia*] գործը, թիվ 29492/05, § 98, 2009 թվականի փետրվարի 26): Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը մի շարք միջոցներ է նախատեսում, որոնք կարող են դիվանագիտական էթիկան խախտելու դեպքում կիրառվել դիվանագետի նկատմամբ՝ սկսած նախազգուշացումից, որին հաջորդում է նկատողությունը, խիստ նկատողությունը, աշխատավարձի իջեցումը եւ վերջապես՝ աշխատանքից

ազատելը: Կառավարության՝ «Դիվանագետի էթիկայի կանոնները հաստատելու մասին» որոշմամբ (2002 թվականի մայիսի 20-ի թիվ 590 որոշում) նախատեսվում է, *inter alia*, որ դիվանագետը պարտավոր է՝

«... բ) չօգտագործել կամ չչարաշահել պաշտոնեական (ծառայողական) դիրքը եւ աշխատանքային միջոցները կամ ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած կամ ձեռք բերված տեղեկությունները՝ ինչպես անձնական կամ երրորդ անձանց շահերին, այնպես էլ կուսակցությունների ու հասարակական կազմակերպությունների (այդ թվում՝ կրոնական միավորումների) շահերին ծառայեցնելու եւ այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնելու նպատակով»

եւ որ

«սույն կանոնների խախտումն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն»:

Սույն գործի նախապատմությունից երեւում է, որ ներպետական մարմինները չեն դիտարկել պատասխանատվության այլ միջոցներ կիրառելու հարցը, այլ փոխարենը, որպես դիմումատուների իրականացրած գործողությունների հետեւանք, անմիջապես դիմել են դիմումատուներին աշխատանքից ազատելու տարբերակին: Դիմումատուներին աշխատանքից ազատելը լուրջ հետեւանքներ է ունեցել: Նրանք զրկվել են մասնագիտական պարտականությունները կատարելու հնարավորությունից, որի համար կոչված էին, որի համար վերապատրաստվել էին եւ որոնք իրականացնելիս փորձ եւ մասնագիտական փորձառություն էին ձեռք բերել (տե՛ս *Ֆոգթն ընդդեմ Գերմանիայի* գործը՝ վերելում հիշատակված, § 60): Դիմումատուների համար իրական արդյունավետ երաշխիքների անհասանելիության փաստն ավելացրել է պատասխանատվության միջոցի խստությունը: Թվում է, թե դիմումատուները վարչական մարմիններ բողոք ներկայացնելու որեւէ հնարավորություն չեն ունեցել: Այս առումով հարկ է կրկին նշել, որ վարույթի արդարությունն ու տրամադրված ընթացակարգային երաշխիքները նույնպես այնպիսի գործոններ են, որոնք պետք է հաշվի առնվեն՝ 10-րդ հոդվածով երաշխավորված՝ ազատ արտահայտվելու իրավունքին

միջամտության համաչափությունը գնահատելիս (տե՛ս, օրինակ՝ *Կուրյեշկինան ընդդեմ Ռուսաստանի* գործը, § 83, եւ *Բական ընդդեմ Հունգարիայի* գործը, § 102, երկուսն էլ հիշատակված են վերեւում):

Հաշվի առնելով ամբողջ վերոշարադրյալը՝ դիմումատուների ազատ արտահայտվելու իրավունքին միջամտությունն արդարացնելու համար Կառավարության կողմից առաջ քաշված պատճառաբանությունները բավարար չէին՝ համոզիչ կերպով հիմնավորելու համար, որ ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ էր նրանց աշխատանքից ազատելը: Նույնիսկ հաշվի առնելով այդ ժամանակ առկա քաղաքական դժվարին իրավիճակն ու ազգային իշխանություններին հայեցողական լիազորությունների որոշակի շրջանակ թույլ տալով՝ դիմումատուներին որպես դիվանագետներ իրենց պաշտոններից ազատելն անհամաչափ էր հետապնդվող իրավաչափ նպատակին: